Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Q-94

891.99
Ա-94
18 NOV 2011
01 JAN 2009

ԱՊԱՐԵՐԳ

ԹԱՏԵՐԳԱԿԱՆ

ԾՈՐԻՆԵԱՑ

ՄԱՆՈՒԷԼ ԱՐՏԱՄԵՏԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ ՎԱՐԱԳԱՅ
ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ 'Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷ
ՍԵՆԵՔԷՐԻՄԱՅ ԱՐՔԱՅԻՆ
ԱՐԾՐՈՒՆԻՈՅ

1860 — ՌՅԹ

ԻՋՄԱՐԱՆԻ ԱՐԾԻՈՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷ
ԻՎԱՆ ԻՎԱՐԱԳ

25 .02. 2013

22472

319
39

ՅՈՅՑ

„ Ի այն ամս բացաւ դուռն բարկու-
„ թեան յերկնից 'ի վերայ աշխարհիս մե-
„ րոյ, եւ շարժեալ զօրք բազումք 'ի թուր-
„ քաստանէ որոց երիվարք արագունք իբ-
„ րեւ զարծուխս, եւ ամբակք նոցա իբրեւ
„ զվէմս հաստատուն, աղեղունք լարեալք,
„ եւ սլաքեալ նետք նոցա, գօտեւորեալք
„ քաջապէս, եւ անլուծանելի ուներով ըզ
„ խրատս կօշկաց։ Եւ երեալ 'ի գաւառն
„ Վասպուրականի, յարձակեցան 'ի վերայ
„ քրիստոնէից իբրեւ գայլս քաղցեալս ան-
„ յագեալս 'ի կերակրոց։

Արիստակէս Լաստիվերտցի։

„ Նոքին ազգն Թուրքաց եւ աւերեցին
„ զգաւառն Վասպուրականի եւ յոյժ նե-
„ ղեցաւ Թագաւորն նոցա Սենեքերիմ,
„ Վասնորոյ եւ զաշխարհն իւր 'ի Վասիլ
„ Թագաւորն եւ էառ փոխան զՍերբաստի-
„ այ գաւառաւքն, բայց զվանօրայսն ոչ եւ

„ Սենեքերիմ 'ի Վասիլ, զի կացցեն ազատ
„ եւ աղօթս արասցեն Սենեքերիմայ եւ
„ որդւոյ նորին։

Սամուէլ Երէց Անեցի։

ՀԱՆԴԻՍ Ա։

ՍԵՆԵՔԵՐԻՄ։ Արքայ Վասպուրականի։

ԴԱՒԻԹ։ ։ ։ ։ Արքայորդի։

ՏԱՊՈՒՀ։ Մեծ զօրավար Սենեքերիմայ։

ՍԻՍԱՆ։ Գաւառապետ Զարեւանդայ։

Ազատագունդ։ Մեծին Վասպուրականի։

ՈՂՐԻՐԳ

ԹԱՏԵՐԳԱԿԱՆ

ՍԵՆԵՓԷՐՈՒՄ ԱՐՔԱՅԻ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՅԳՈՒՐԱԿԱՆԻ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Տեսարանն է յարտուն՝ գալ՝ պան՝ ի Յոպպան. ատ ատմբ Աբեղատարտ ծովեին։ Աբտուն՝ ի՝ ճարպարապետ՝ երինահանգոյն գայծատուն՝ արտ՝ ի՝ մեմբ, ի՝ ատմբ Մանուէլ հայ ճարպարապետ։ Տեսիլ Բշնանեաց ծովն գեղանձեալ զմայլեցուցիչ նկարի յաչս պեսողաց։ Զօրականք ի՝ փոշիպանք տուպ ի՝ անուն գապիտան՝ ինն զեղ գահայն Արծրունեաց։ Յորոյ վերայ ինչ բաղմեալ նստանալ զոհ ուրի Արքայն Սենեքէրիմ Տէր ի՝ հայր խնամակալ բոլոր Վասպուրականի։

ՍԻՍԱԿ

Տէր արքայ, գունդ հաւաքել 'ի կողման՝ ցրն հիւսիսական աշխարհաց խիստ արանց անկրօնից՝ յարեւելից կողմանէ մտին 'ի սահման տէրութեան ձերոյ, եւ անխնայ աւերեալ զքաղաքն զշէնս եւ զանշէնս. որոյ վասն խուճապ տագնապաւ յոտս բարեխնամ տեսանդ դիմեալ զելս հնարից գըտանել պաղատիմ։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Ամբիսիս ոմանք են այնոքիկ եւ զինչ ազգ եւ ժողովուրդ. զի այդպէս համարձակին մեծաւ յանդգնութեամբ մտանել յերկիր տէրութեան մերոյ, առանց դեսպանի քանագնացութեան եւ առանց քաղաքական

օրինի , որպէս պարտին առնել ամենայն թագաւորութիւնք եւ իշխանութիւնք կառավարեալք ընդ արեգակամբ ։

ՍԻՍԱԿ

Տէր վեհափառ , ոչ են որպէս կարծէ տէրութիւն ձեր , արքն այնոքիկ որդիք քաղաքականութեան կամ որեարք որոց առաջնորդէ մարդավարութիւն . այլ գազանք աբեանարբուք կատաղիք որպէս զվայրենի վագերս . անգութք եւ բարբարոսք , զմիս մարդկան առաւել սիրեն ուտել քան զանբան անասնոց , ոչ գտանի 'ի նոսա ոչ օրէնք զի հնազանդեսցեն եւ ոչ հաւատ առ որ զի մնասցեն պատկառ . վայրենիք ծնեալք են եւ վայրենացեալ յեւս ։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Եթէ այդպէս , Սիսակ զօրապետ , ընդէր ոչ ժողովեալ զքաջն յայնոցիկ կողմանց եւ տուր պատերազմ ընդ խաւնաշիոթ ամ-

բոխին, ընդէր չարն չարաւ. ոչ կորուաներ։ Ա՛յլ թողեր յառաջ խաղալ եւ զվայելչութիւն կողմանցն այնոցիկ մատնեցեր կորզրպուտ նոցին։ ոչ գիտէիր թէ վատահութիւն մեծ ունէի 'ի վերայ քո։ Արդ ոչ քաջի առն կատարեցեր արժանի գործ՝ վատութեամբ տեղի տալովդ։

ՍԻՍԱԿ

'Ներեա տէր իմ, զի հայեցեալ ընդ ուժ զօրութեան եւ ընդ պատրաստութիւն նոցին, ոչ խոհեմութեան համարեցայ գործ 'ի վէգ գալ ընդ նոսին. զի լուեալ իսկ եմ առածին զբան որ ասէ, « Ձեռք՝ որ յանկարս ձգին, ոչ առանց վիրաց ժողովին 'ի ծոց »։ եւ թէ « Անմիտ է նա, որ ընդ վեհս քան զինքն 'ի պայքար մտանէ »։ Ահա զայսոսիկ զմտաւ ածելով ոչ բարուոք համարեցայ անխոհեմ յոխորդանօք զիւառս մեծի Տէրութեան ձերոյ Նուաստացուցանել առաջի ամբարիշտ Սկիւթացւոյն։

ԴԱՒԻԹ ԱՐՔԱՅՈՐԴԻ

Քաջ խոհականն են գործ Սիսակայ. զի ըստ ասից, խորհրդով մղի պատերազմ եւ ոչ բանիւ կամ անխորհուրդ յանդգնութեամբ. զինչ շահ լինէր տկար զօրութեամբ մի կամ երկուցս 'ի դիմի հարկանել թռնացելոյն եւ ոչ յիշատակի արժանաւոր գործ վճարել. թող զայն՝ վնաս առաւելագոյն լինելոց էր քան զօգուտ։

Հրաման տացէ, Տէր արքայ որդւոյ զօրութեան ամենայն աւժդնութեամբ յառնել 'ի վերայ թլքացն այնոցիկ վայրենեաց եւ քանդեալ խորտակել զզօրութիւն պընդութեան նոցին եւ հալածական 'ի սահմանացն Վասպուրականի տարեալ վաստրել։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Վասպուհ մեծ զօրավարդ եմ, հրաման եւ տու զունդ ստուար կազմել յազատաց եւ յանազատաց եւ յոստանիկ տանէ եւ մե-

ծաւ պատրաստութեամբ 'ի կողմանցն Վա-
նայ ընդ Արտազու խաղալ գնալ 'ի վերայ
եկելոց խուժադուժ ազգացն. ընդ քեզ ու-
նելով եւ զազատագունդն Անձեւացեաց եւ
երկուս հազարս այր եւ ձիոյ քաջի 'ի սահմա-
նացն Քաջբերունեաց եւ Կորճէից. հրաման
եառու նա եւ գաւառ գաւառաց ամե-
նայն նպաստիւք օգնական եւ ձեռնտու լի-
նել մեծի բանակին։

Գնայ Շապուհ ըստ հրամանի Արտայի 'ի պապ-
րատպոլիսն բանակին։

Սենեքերիմ գդուռին արտայորէն 'ի ծանուցմ։

Զորձ մեծ է այս եւ կարի դժուարին
թէ, յաջողեսցէ Տէր, ուժգնութեամբ վա-
նել՝ այն բարւոյ են նշանք, իսկ եթէ ոչ. . ։

ԴԱՒԻԹ

Ընթիւն քաջութեան յերակուանս իմ եռացեալ, տէր արքայ, ոչ կարեմ կալ եւ ոչ հանդարտիլ ընդ դէմ ժանտ թշնամեացն այնոցիկ։ Օ՛ն ուրեմն եթէ գտի շնորհս առաջի քո հզօր արքայ. տուր ինձ հրաման այս անպատմ կալ յառաջ խաչադրօշ բանակիդ եւ առնուլ զվրէժ անարգանաց 'ի պղծոցն յայնցանէ, որ ոչ ճանաչեն զԱստուած եւ զօրէնս նորին, եթէ Տէր տայցէ յաջողութիւն արուեստ մատանց մերոց ցուցեալ՝ արարիցս Սկիւթացին ծառայ Արծուանիշ դրօշակիդ. որ ահա ծածանի 'ի վերայ բարձու աշտարակի պարսպաց պալատանդ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Արդեսակ, դեռ անհնուտես դու պատերազմի եւ քաջալերիլ սկսցես դու քան պատմելոց ձեր՝ քաջութիւնդ եւ արեանալրուռ, որպէս կարիս առանց երկար մարզանաց անդէն անդ 'ի

ճակատ կալ բանակի եւ ընդ հուժկու դիմադրաւթի կռուիլ, լուեալ դու յայս նուազ զի չէ պատերազմն ճակատ անվարժից։

ԴԱՒԻԹ

Դիտեմ, վեհափառ տէր, զի գուրթ ծնողական ստիպէ զքեզ չձգել զիս յայն վըտանդ՝ 'ի վերս քան զկար, բայց ծառայ քոց չէ յուսացեալ է յուժ մարմնոյ եւ 'ի զօրութիւն բազկի, այլ յիրաւունս անընկճելի եւ 'ի ճշմարտութիւն անծերանալի։ Եւ ինչ ընդդէմ նոցին քան մեծին Դաւթի քանիւ տեառն զօրութեանց եւ հարիցը ըզ ճակատ նորին պարտակաւ կենազէն Յոյաչիս Վարագայ եւ առեալ զվրէժ անարգանաց նորին։

Բանզի ոչ է Սկիւթացին այն լիրբ, որ զօրանչելով զբանակ Տեառն հայհոյէ եւ զյարկ նորոյս Սիոնի արքոյ։

Ես պատրաստ եմ, հայր, կամակար նահատակութեամբ հեղուլ զարիւնս իմ վասն աւրբ եկեղեցւոյ եւ ցանկալի հայրենեաց

յորմէ առեալ եմ սկիզբն լինելութեան, ոչ կարէ, եւ ոչ մի երկիւղ աշխարհային զատանել զիս 'ի մեծի յուսոյս եւ յեկեալ հասեալ յաղթութենէս, որ իբր առ աչօք ակներեւ պայծառ նշմարեմ. երկիւղ կնամարդի վատութեան է նշանակ "Սէրն կատարեալ 'ի քաց մերժէ զերկիւղն մեղկութեան», թոյլ արա ինձ, հայր, աղաչեմ թոյլ արա ինձ ընդ հայրենաքիրա զօրուդ ճախրել 'ի վերայ սեւադուռնդ Սկիւթացւոյն. մի զանգիտեր, զի զօրութիւն կենառնակ Սուրբ Խաչին նեցուկ է թիկանցս եւ վահան անզծելի յառաջս. Ո՞չ ապաքէն հայր, զոր ուսուցեր ինձ քաջութեամբ դիմազրաւ լինել վասն հայրենեաց. Եթէ վրատունդ եւս մահու վասն նորին պատահիցէ՝ ոչ ապաքէն երկինք մնան վարձատրիչ եւ հոյլք հոգեղինաց պսակիչք արանց 'ի սէր կրօնի եւ հայրենեաց քաջացելոց.

ՍԵՆԵՔԵՐԻՄ.

Պտուղ օրհնութեան ոլորեակ իմ Դաւիթ, որովհետեւ այդ չափ զօրացեալ է 'ի քեզ սէր կրօնի եւ հայրենեաց եւ այդպէս արծարծեալ վառի 'ի սրտի քում ոգի սրբազան Ազգասիրութեան, աներկիւղ վստահեմ, թէ կարես գործել զարմանալիս. զի քաջութիւնս դիւցազնական ոչ այնքան 'ի յուժ մարմնոյ փայլի՝ որ չափ 'ի սէր անընկճելի եւ 'ի սիրտ առիւծասիրտ. Ոչ անծանօթ է 'ի քէն քաջութիւն առնասիրտ արութեան Յուդթայ, որ զահեղամռունչն Հողեբեռնէս 'ի սուր սուսերի իւրոյ ճարակ տուեալ ընդ ոտիւք յերկիր թաւալեցուցանէր, յամօթ եւ 'ի խայտառականս բարձրախրոխտ Տէրութեան Ասորեստանեաց. Եւս եւ բազում պատերազմունք. որք 'ի պնդութենէ արիասիրտ քաջացելոց ցիր եւ ցան կացեալ ոչինչ կարացին կատարել: Եւ ըստ փայլակին օրինակի 'ի լինելն կորեան

եւ ըստ պղպջակին անձրեւաց նոյն հե-
տայն 'ի պատառումն դատապարտեցան,
որպէս խրոխտացեալն Բէլ , ամբարիշտն
Յուլիանոս եւ այլք ։

Ա ստահ եմ 'ի քեզ որդեակ ժառանգ
թագաւորութեանս, տաց զքեզ ընդ խնա-
մակալութեամբ մեծի հազարապետիս Հայ-
հոյ գնալ 'ի մարզ պատերազմի ։ Բայց
պարտիս երբեւ որդի մեծաւ հպատակու-
թեամբ պատկառ կալ ամենայն ակնածու-
թեանց նորին . նա դաստիարակ քեզ՝ եւ
դու նորին կամակատար որդի եւ հնա-
զանդ ։

ՏԵՍԻԼ Բ.

Հապա՞հ ունի քանակա՞ գարշ տեսիլ յաբ-
ջանէս Սենեքերիմայ 'ի Ասորոց , Աստ-
ուծէ տրտային զիսմոնքին պարտասոնքեան
ունի քանակին . Դրօշակ պարտիզպանաց պար-
զեալ ծածանին ե՝ քաղաք արուպայեան նշան պան զօ-
գայ տունայն 'ի շարժո՝ն .

ՀԱՊՈՒՀ

Տէր արքայ , եղեւ ըստ բարձուս հրա-
մանաց ակնարկութեան տեառնդ , պատ-
բաստութիւն գնդից եւ ամենայն պիտոյից
ճակատու անթերի լրացան . Ահա կան ար-
տաքոյ ամենայն սպայք եւ զօրսեն ակ-
նարկութեան հրամանաց ձերոց .

ՍԵՆԵԿԷՐԻՄ

Իայց ոչպէս ։

ՇԼՅՈՒՀ

Գունդն Ռշտունեաց Հազարապետօք եւ Հարիւրապետօք Իւրեանց ։ գունդն Հայկաձորոյ ։ Անձեւացեաց ։ Տոսպայ ։ Գնունեաց ։ Արտազու ։ Առքերանեայ հեծելօք Հազարապետօք եւ Հարիւրապետօք Իւրեանց գունդ, Մոկք ։ Արտաշատունիք ։ Մեծնունիք ։ Պալունիք ։ Վարաժնունիք ։ Պարսպարունիք Իւրեանց բովանդակ պատրաստութեամբ ։ Վերին Պարսկահայոց եւ Աղբակեանց հրաման է զառաջին ունել թըշնամեաց մինչեւ 'ի հասանել մեծի բանակիս ։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Ա.ՅԴ ամենայն բարուք եւ գովելի, բայց Հապուհ զօրապետ իմ՝ այսօր տամ 'ի ձեռս քո եւ զիմ թագաժառանգ որդին Դաւիթ, զի քոյով դաստիարակութեամբ 'ի մարզ կրթեալ, փոյձ եւ արի հանդիսասցի. քանզի իշխան ոք եթէ չունիցի արուեստիւն քաջութեան անարժան է իշխանութեան. տամ 'ի ձեռս քոյ, բայց պարտիս վերակացու լինել ամենայն շարժմանց նորա. մի թոյլ տացես յերիտասարդական 'ի բուռն կրեց յանիշտակեալ՝ 'ի վեր քան զկարն իւր արկցէ զանձն 'ի վտանգ, զի կիւք անզուսպ բազում անգամ ածէ անձին իւրոյ զկորուստ. Իսկ ապառնալիք հայրագութ սիրոյ անձակոծեալ բերէ զերիտասարդն յուղղութիւն եւ շնորհէ նմա կրկին տեսանել զարեւ։ Արդ՝ դու վարժեարնմին 'ի պատերազմի՝ եւ նա հլու հպատակ աշակերտ քո։

ՀԱՊՈՒՀ

Ո՞ՀԾ եւ կարի ծանր է պաշտօնդ այդ յայս նուազ յանձնեալ ծառայի քո, բայց հրամանք են մեծի արքայութեան, ո՛ կարէ դիմակալեալ ճիկ հանել. եղիցին որպէս կամք բարերարի Տեառնդ ախորժէ։

Կալէալ արքայի չէ՞ անէ Արքայորդւոյն պայ՝ է յե՞ս Հապհոյ մեծի զօրավարին է՞ր այս բան ասելով։

-Քաջ զօրապետ իմ Հապուհ ահա՛ այսօր տամ՝ ի՛ ձեռս քո ոչ արքայորդիս միայն, այլ համայն թագաւորութիւնս Վասպուրականի։ Առաքինացիր ուրեմն որչափ խոհեմութիւն քոյ եւ հանճար եւ քաջութիւն զօրեն. քեզ մնայ հայրենի տուն, վեհ ճակատուդ բոլորեալ պահէ արքունիքս յաղթական պսակաց զշուք. զօրացիր եւ քաջ լեր զի դու կարիթակոտոր արարեալ հալածական տանելոց ես զԵլիմային անհաւատ եւ չար՝ ի սահմանաց հայրենեւոյս, եւ տացես էրրա-

քանչիւր հայ որերոյ, կրկին նատիլ ընդ որ-
թով Լուսեանց եւ ընդ Թզենեաւ։

ՀԱՊՈՒՀ ԱՌԱՆՁԻՆ

Ո՛վ Աստուած՝ որպիսի ծանր գործոյ 'ի ներ-
քոյ էարկ զիս ապքայ, որպէս կարկեցեմ հայր
եւ դաստիարակ լինել պատանեւոյն, որոյ
բուռն են կիրք եւ անհմուտ 'ի վարժս պա-
տերազմաց. եւ նմանեցայ Սմբատայ մեծի
իշխանին. որ առեալ զմանուկն Աբուսահլ
ծանրակիր վշտօք տառապեցաւ յանծանօթ
վայրս եւ 'ի մեծամեծ պատերազմունս՝ մին-
չեւ ապդիւնքն 'ի գլուխ ելեալ բերեալ
հանգուցանէ զնա 'ի գահ Ապքայական,
կրկին նորոգելով զՀայաստան։ Պիտին ինձ
քաջ խոհականութեան միտք, երկարատոկ
համբերութեան սիրտ, անվտանգելի քաջ ա-
րիութիւն ըստ Սմբատայ մեծի իշխանին
այնորիկ. զի կարացից պարզերս հանդիսա-
նալ առաջի հայրենեաց, եւ անուն իմ պատ-
կառելի յիշեցի յէջս պատմութեանն ազգային

Սրեմն ոչ տէր իմ եւ Աստուած, դու տուր զօրութիւն եւ կարողութիւն մտացս եւ անձինս, 'ի քեզ կամ ապաստանեալ, յանուն քո երանեմ 'ի ճակատ. քոէ յաղթութիւն եւ փառք, 'ի քեզ կամ ապաստան. դու լեր ինձ զօրավիգ։

Զօրահանդէս ատանէ Հ.ապոհ ՏԵՅԷ ԲԱՆԱՅԻՆ ատ- ատէտՄ Աշխատարտ- ՃՈՎԱՅԻՆ 'Ի ԴԱՇՏ ԴԷՐ։ ԱՐՔԱՅՈՐԴԷՆ ԴԱ-ԻՐ ապարանոպ ԵՐԷ-ՁԱՐԱ- ԵԼԱՆԷ 'Ի ՀԱՆԴԷՍ։ ԱՊԱՅ ՀՈՐՉԱՆԱՅԷ ՊԱՐ ՈՆԷՆ ՁԱՐԱՅՈՐԴՈՎՆ. Ե- ԻՆՉՆ ԱՐՔԱՅ 'Է ԲԱՅՐ ԴԷՊԱՆՈՅԷ ԽՈՅԵԱԼ 'Է ՁՆԷՆ ՊԱՊՐԱՍՊՈ-ՐԷԱՆ Ե- 'Ի ԼԱ-Ր ԽՐԱԽՈ-ԱՍԱՆ ԵՐԳՈՅ՝ ՀՈՐ ԴԱ-ԻՐ ատ- ՀԱՋԱՊԱ-ՆԱ ԱՐՃԱՅԷԼՈՎ ՎԱ-Է ԸՆԴ ՀՐԵՀԷՆ Ե- ՀԱԷՐՊԱ ՆՈՅԷՆ 'Է ՎՐԷԺ ԱՆՀԱ-ԱՊԷՆ։

Ազատորեար դիւցազունք,
Զրեհաւոր քաջաձիգ,
Զեզ կան նման հայրենիք,
Փառաց հքոյ ծրծել սիք։

(418 / 176-200)

Օ՛ն յաղթեսցուք Եկիմայ
Որ անասասուած յոխորտայ։
Սուսերն նիզակ եւ աշկեայ
Հոլ շողացէ դէմ նորա։
Երկինք զուարթ ընդ մեզ հաշտ,
Տայ թշնամին մեզ տապաստ,
Հոլ արեգին երփներանգ.
Վառէ արտից մեր զխանք։
Օ՛ն յաղթես։

Արտոս այս լեռանն ազատ,
Որ ընդ մեօք կայ 'ի պատ,
Մեր քաջութեան նշանակ։
Կացցէ քարոզ համարձակ։
Օ՛ն յաղթես։

Ծովակս աղի կապուտակ,
Մեր կրեսցէ դրօշակ,
Խաչ եւ Արծիւ սխրափակ,
Իշխան կացցեն աշխարհաց։
Օ՛ն յաղթես։

Վանք մենատանք բազմաթիւ,
Որ միջերկրեալ են ցրիւ.

Յան բարեխօս անձանձիր.
Յամբոկ գործոյս ժլատիր։
Օ՛ն յաղթեա։

Քաջաց ծնունդ քաջազունք,
Վեհ կորովի ասպետունք,
Սարսուռ շփոթ եւ մահունք,
Առեալ փախչին վատ թշրքունք։
Օ՛ն յաղթեա։

Խաչոյ Բանին ՝ի վերին ոտհանն։ Արքազունդ Տէր Սկէ-Խաչոյ։ Արքայորդին Դաւիթ պատերազմ ղրահիւ անգնելի ինչն է-նձոյգն իւր ոսկեանն՝ գնայ յաւաջոյ Բանին, ըստ էութեան՝ ասի ապոյժ-ի յոսպանիկ արանց։

ՀԱՊՈՒՀ

Ժառանգդ Վասպուրական թագաւորութեան տէրդ պանծալի, յուշ լիցի քեզ զի՝ի խառան պատերազմի բազմապիսի հնարք եւ խոհեմութիւնք պիտին. մանաւանդ քեզապէս վերջացելոց իշխանական շքով։ Զի թշնամին ոխերիմ Զանոյ եւ Նիզրոն յայն

գէտ ուժ զօրութեան իւրոյ թափել , ուր-
անօր տեսանէ թէ բազումք են որեալք
ընտիրք եւ անուանիք տէրութեամբ ։ Գի-
տէ զի եթէ ինասի հովիւն , ոչխարքն վայ-
րապատ ցրուին , կամ 'ի ինասիլ գլխոյն ,
անդամք դիւրաւ ընդունին զդալուկ մա-
հառիթ ։ Ապա որ գլուխդ ես մեծի բանա-
կին՝ պարտիս խոհեմաբար պաշտպան կալ ան-
ձին , զի քոյով կենդանութեամբ բազմաց ըզ-
քեւ եղելոց շնորհեսցես զկենդանութիւն ։
Խրախուսեաց 'ի մարտ , բայց մի՛ անխոր-
հուրդ մխեր զքեզ 'ի վտանգաւոր տեղիս.
ուր տեսանես թէ թշնամին կատաղու-
թեամբ մոլեգնեալ է եւ վերջին յուսահա-
տութեամբ պատերազմի , ուր տեղի չէ յա-
ջող արարշաւ շահատակիլ եւ 'ի կրունկն
դառնալով զինքեամբ գալ եւ կրկին պատ-
րաստիլ . զայսոսիկ գիտելով եւ օրինակք կրը-
թելոյ քեզ խրատ լիցին ։

ԴԱՒԻԹ

Այրապատիւ սպասաւոր՝ բուռն է ինձ գիտեմ կիրք անզուսպ եւ հասակ տղայութեան եւս առաւելու զայն, բայց 'ի քոյ խնամն դաստիարակեալ՝ վստահիմ բարութեան հանդիպել եւ ճիգն իմ ոչ առանց արդիւնաւոր արդասեաց 'ի զուր կորիցէ։ Բայց անվեհեր վստահ եմ հեղուլ զարիւնս 'ի փառս Վասպուրականի եւ 'ի սէր սրբազան կրօնիս։ Թոյլ արա՛ ինձ խնդրեմ, եթէ իմով մահուամբ զգեցնու հայրենիս ազատութիւն փառաց, ո՛չ զանգիտեմ տալ զիս 'ի վտանգ մահու։ զի քաջքը է յոյժ վասն սիրուն հայրենեաց նահատակի զպսակ եւ զանուն եւ զհոգիս ժառանգել։ Բարիք են այնոքիկ, որք անկողոպուտ ընդ մեզ մնան միշտ թէ 'ի կեանս եւ թէ 'ի մահու։ չեմ աւելի քան զնախնի դիւցազունս որք 'ի յորդոր յեռանելոցս եղին զկեանս իւրեանց եւ եղեն փրկանք աշխարհաց։ Եթէ արարք մեծին

Աբիւլեայ վառէր զսիրտ մակեդոնացւոյն Աղեքսանդրի. ապա քանի առաւել գերահրրաշ արարք մեծին Վարդանայ զիմաստս ոչ տոչորիցեն սիրտ, որոյ անճնադիր քաջութեան յիշատակ հանրական եկեղեցի Աստուծոյ մեծաւ տօնախմբութեամբ յաւերժացուցեալ անմահացուցանէ. եւ դաշտն Աւարայրի լայնածիր սահմանաւ իւրով, արձան անջնջելի առ կայացեալ կայ Անտաղ դարուց 'ի դարս։

ՀԱՊՈՒՀԱՌ ՋՕՐԱԿԱՆՆ

Այլ զօրականք, որք էք փառք Վասպուրական թագաւորութեան. գիտէք զի այս առաջին նուագ է, որ ինքն Աստուածորդին ընդ ձեզ խաղայ 'ի պատերազմ ընդդէմ անհաւատին։ Այս անգամ է որ պանծաշուք պատիւք ունի մեր զօրական զիւրն արժանին առնուլ վարձ։ Օն հապա զօրացարուք քաջայարուք լինել որդիք զօրութեան, ձեզ օրինակ լիցի հանդիսաւորեալ քա-

ջուլթիւն Մակաբեանցն առաջնոց՝ որք Աստուածային հրոյ նախանձուն վառեալ գործեցին այք տկալք քաջութիւն 'ի վերք քան զմիտս եւ ընկալան զպատկ քաջութեան դարուց 'ի դարս։ Ո՛չ հեռի են 'ի մէնջ մեծին Վարդանայ արիապանծ գործոց յիշատակք. որ իւրովք քաջ նիզակակցօք ընդդէմ հրապաշտին աներկիւղ պատերազմեալ՝ ազատ կացոյց զեկեղեցի Աստուծոյ 'ի ծանր լծոց հրապաշտ Պարսին, որոց քրտանց զկերցուցանող արդիւնս վայելեալ, մնամք 'ի հաւատս լուսաւոր եւ ամբիծ. աւանդէ այս սրբութեան 'ի մեզ յանձն ապարեալ յերանելեաց անտի, պարտիմք ազատ ըստ նոցին օրինակի յօժարութեամբ դնել զանձինս զի. աւանդն անդին առանց վնասոյ կերցեալ յաւէրժացն։

ՉՕՐԱԿԱՆՔ

Ելք զօրութեան ընկերք արիք անվեհեր
Չէն կալարուք վատ խուժանին տալ երեր.
Թէպէտ շռինգ թէպէտ շփոթ շատ ոլեար
Բայց մեր հաւատ մշտայաղթող զօրավար.
Աստուած ընդ մեզ մի երկիցուք իբր անզօր
Մեր թշնամին նա իսկ առնէ զլխակոր։

Յամամիպ է՝ համագունդ 'ի վերայ յարձակ-
եալ ընդնամեայ. զբուվանդակ զօրուն-ն նոցին
այպն արարեալ պան մղօն պապերազմ արքիզ
ՀԱՉԱՅԵԼ. բայց նէպ է՝ սալա՛ء ընդնամուն յոյժ
այլապարաչ 'ի բայցուապ ռեծ վեան գորձէր
արքանի զօրուն, որոյ 'ի խորպանէլ զօրուեան
բաշմեյս 'ի վրանգ զանչն է՝ր մոպնէ ԱղՀայոր-
զին, բայց յամոռ բանէց Հապհոյ յաղնահարեալ
ապապ զանչն է՝ր ճոգոպրէ։ Անդ 'ի խէզախել
ՀԱՉԱՅն ՁԱՍՊՈՐԱԿԱՆԻ բեկեալ հրճանի զօ-
րուն Սկի�այոյն. է՝ բանակն արքանի յաղ-
նանքա՝ դառնայ առ Սենեքերիմ 'ի յՈՍպան.

ՀԱՆԴԻՍ Բ.

ՄԵՆԵՔԷՐԻՄ · ԴԱՒԻԹ · ՀԱՊՈՒՀ · ՍԻՍԱԿ · ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ ԱՐՔՈՒՆԻ

ՄԵՆԵՔԷՐԻՄ

Ողջոյն է քաջ զօրականք իմ. որպէս յաջողեցաք ձեզ Տէր, եւ որ մահուանք 'ի վերայ ածիք թշնամեաց։

ՀԱՊՈՒՀ

Տէր արքայ, յաղթութիւն տեսառն եւ քանակի նոցին . անվնաս շահատակութեամբ այս անգամ եւս ազատագուն վասպուրականն թագաւորութեան. զոր ոչ իւր արծաւակիր կանգնեաց 'ի բանակատեղի թշնամեաց հրոյդ. եւ բարձրացոյց զիրաւս նորին առաւել քան զառաջին։ Բայց արքայորդին բազմիցս 'ի վաղանդ սարսեալի նահատակեաց զանձն իւր, եւ խոսրովանիմ խակ

թէ գլխովին նորին են յաղթութիւնքս. զի թշնամին խրոխտէ եւ արեան արբու, տարազ զրահից նոցին այլատարազ, ներոք ուժգնապիրկք եւ կարի հեռաձիգ, ինքեանք վշտամբերք եւ կարի տոկացողք աշխատութեանց պատերազմի։

ՍԻՍԱԿ

Արդարն ասացից իմ 'ի կեանս չէր տեսեալ այնպիսի արս հուժկու անվեհեր եւ խուժադուժ. զի ունին զբնութիւն արեանարբու գազանի ահաւոր տեսլեամբ դէմք նոցա զարհուրեցուցանէ զտեսօղս եւ ահաբեկ առնէ, բնակութիւն նոցա 'ի լերինս եւ 'ի դաշտս եւ յանապատս որպէս զվայրենի գազանաց եւ են շաղղակերք ըստ օրինակի նոցին. ոչ պատուեն զմեծամեծս ոչ խնայեն յալիս հարկեւոր ծերոցն, ոչ ողորմին երիտասարդին եւ տղային. . . . „Ազգ չար եւ դառնացօղ, ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր եւ ոչ հաստատեաց առ

աստուած զհոգի իւր »։ Ո՛չ զօրէն գլուեն եւ ո՛չ քաղաքականութիւն, գազանաբար ծնեալք են եւ գազանաբար կենցաղավարին։ Եթէ այցելութիւն տեառն աստուծոյ եւ ալիսական պնդութիւն արքայորդւոյն եւ ազատագունդ զօրաց չէր դիմադրաւ՝ վնաս մեծ կրէր հայրենիս։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Եթէ այդպէս վտանգաւոր էր պատերազմն եւ թշնամին դոյն օրինակ ամենի գազանացեալ, ապա որպէս Դաւիթ որդեակ իմ անձնապաստան լեալ մատնեցեր զանձն քո 'ի վտանգն, ոչ ապաքէն վնաս մեծ կրէր ատրութիւնս եթէ ճախողակի ինչ դիպեալ լիներ։

ԴԱՒԻԹ

Տէր վեհափառ՝ ես 'ի բազումս լուեալ իսկ եմ խրախուսական բանն այն որ ասէ, « Լաւ է քաջութեամբ մեռանիլ 'ի վերայ

հայրենեաց քան վատութեամբ կեանս վա-
րելով հաց ցաւոց ուտել »։ Մի թէ չէ՞ն
ինձ բաւական արարք հոյակապ անձանց
եւ անձնադիր հայրենասիրացն առաջնոց։
Ծնեալ եմ վասն Աստուծոյ եւ հայրենեաց։
ոչ զանդիտեմ մեռանիլ վասն Աստուծոյ եւ
հայրենեաց։ Լուանք էր արդարեւ մեծ
եւ համարեա թէ հրաշք՝ ազատութիւն իմ
յայնպիսի տագնապից կոտորածէ։ բայց
այցելութիւն վերնախնամ եւ հայրագութ
խանդաղատանք Տապհոյ մեծի զօրավարի՝ի
թիկունս ինձ հասեալ՝ կրկին եռուն տեսա-
նել արեւ հայրենեաց եւ վայելել գորա-
վաղէտ սէր ձերում բարձր հայրութեան։

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ

Որովհետեւ թշնամիքդ են այդպէս խիստ
եւ անամոթելիք, արք զօրութեան մերոյ
որպէս լսեմք ապրատիւ կան պակուցեալք,
զեան կոտորածին մեծ է յոյժ, եւ ին-
քեանք թշնամիք ոչ յապաղին՝ի կրկին
դարձ իւրեանց։ Ուրեմն արժան է Տեա-

ունլուր մերոյ խոհականի զելս հնարից գըտանել եւ մի տալ անողորմիցն եւ չարաց զվայելչութիւն երկրին աղարտել։ Եթէ հնար չինչ է, զշնչական ազինս յօգնականութիւն կոչել եւ զօրս 'ի վարձու ունել եւ կամ 'ի Կոստանդնուպօլիս դիմել առ Վասիլ կայսր աղերսել զինու եւ զօրու օգնականութիւն գտանել. զմեծամեծ քաղաքս պարտ է ամրացուցանել. պաշար յոլովակի ժողովեալ ամբարել. զէն ամենայն պատրաստութեամբ զօրականին կանխադոյն ըցուցանել. եւ յետ այնորիկ հրաւիրակս յամենայն 'ի գաւառս հանեալ յորդոր խըրախուսանաց առ ամենայն մարդիկ կարդալ եւ սէր վրէժխնդրութեան հայրենեաց 'ի նոցին 'ի սիրտս վառեալ արծարծել, զի յօժարեցցի ամենայն ոք 'ի նախանձ բարի բորբոքեալ անձնադիր 'ի վերայ հայրենեաց լինել։

ԱԵՆԵՔԷՐԻՄ

Իշխակայ ազին՝ առ որս վտանգելի է խընդրել յօգնութիւն, Ասորին եւ Պարսիկն նկուն եղեալ են, 'ի գազան Սարագինոսէն չէ յուսալի բարիս գտանել. Յոյն բազմիցս խարդախութեամբ վարեցաւ ընդ Հայս, որոց փորձ բազում անգամ առին հարքն մեր եւ մեք. Իսկ որ բնիկն էր մեր եւ արենակիցն թագաւորութիւն Բագրատունեաց. ընդ նոսին նախ առաջին ապստամբութեամբ վարեցան հարքն մեր Արծրունիք եւ նոյն հակառակութեան բոց մինչեւ ցաւուրս մեր տակաւին չբարձաւ 'ի միջոյ. զի յիւրերաց պարզութեամբ ձեռն օգնականութեան վատահիցեմք խնդրել, եւ որ չարն է՝ նոքին եւս ազգայինքն մեր 'ի զանազան աղմուկս շփոթից կան շուարեալք. Եւ թագակալն այնմիկ պանծալի թագին ինքն Սմբատ Յովհաննէս ալքայ, չունի արութիւն քաջութեան նախնի քաջացելոց,

առ որ վստահացեալ ոք ձեռն օգնականութեան խնդրեսցէ, 'ի վերայ այսր ամենայնի մնայ ինձ խորհել խորհուրդ ծանր եւ փրկանաւոր առանց որոյ չկարծեմ թէ խաղաղութիւն եւ անդորրութիւն կարեմք 'ի ձեռաս բերել մեզ եւ որդւոց մերոց յետ մեզ։

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ

Ջ՞ինչ տէր արքայ։

ՍԵՆԵԿԷՐԻՄ

Ջմտաւ ածեալ անհանգիստ հետախուզանօք գտանեմ 'ի մարգարէական տառն եւ 'ի տեսիլն մեծի հայրապետին Ներսէսի արքոյ, թէ ամենայնիւ լրացեալ է իշխանութիւն կողմանցս այսոցիկ յայսմիկ ժամանակի, զի գուշակութիւնք նոցին թուականդակ բոլորեալ գրեալք 'ի կատարն լրացեալ իսկ են, յորոց

վերայ իմաստուն խոհականութեամբ դատ արարեալ զոր հայթայթել խոհականի է գործ. զի մի ըստ նախնոյն Վահէի Հայ-կազնոյ անխորհուրդ սոնքացեալ. որպէս նայն Մակեդոնացւոյն Աղեքսանդրի՝ մեք անհաւատին Սկիւթացւոյ մատնեսցուք զանձինս եւ զընտանիս։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԵՆԵՔԷՐԻՄ ԵՒ ԺԱՌԱՆԳԱՒՈՐՔՆ ԻՒՐ ԴԱՒԻԹ. ԱՏՈՄ. ԱՊՈՒՍԱՀԼ. ԿՈՒՏԱՆԴԻՆ. ՎԵՍՏ. ԴԵՐԵՆԻԿ. ԴԱԴԻԿ. ԱՂՈՏ. ԵՒ ԱՌՏՆԻՆ ԸՆՏԱՆԻՔ

Տեսարանն է յարչուանի պալատն 'ի յՈսպան. գէղերային ժամ վերջերորդ, յորում բնուրիւն ամենաշաղար 'ի լիմբէր հանգուցեալ ծծէ չուանուլ։ Արշայ ընդ ընդանէս իւր 'ի խորհուրդ մտեալ խօսի։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Սիրուն ընտանիք իմ, խորհուրդք յաբա-
ծուվք անհանգիստ զիս կացուցանեն վան
դառնութեան ժամանակիս, եւ գոգՀէր
թէ ամենայն ընդմիտքանեալ հնչին 'ի լը-
սելիս թէ վախճան իշխանութեան յայտոսիկ
կողմանց եւ Վասպուրական թագաւորու-
թեանս եկեալ հասեալ իսկ է. խոհականու-
թեան մնայ տեղի տալ եւ փափաքիլ 'ի
բարկութենէ որ եկեալ հասեալ իսկ է, զի
եթէ տէր ոչ շինէ զքաղաքն 'ի նանիր է
վաստակ շինողացն, ըստ ասից մեծի մար-
գարէին. հաւատեաւ գիտեմ զի ուն-
Ասուած գաւազանաւ բարկութեան իւ-
րոյ դատել զՎասպուրական աշխարհ վան
զօրացեալ անօրէնութեան մերոյ. օ՛ն զմտաւ
ածեալ եմ, զքուրձ սգոյ գաղթականութեան
զգենուլ եւ երթալ նստիլ յօտար 'ի յաշ-
խարհ. անդ ըստ օրինակի Իսրայէլացւոց կա-
խեալ զկտակարանս յուռենեաց թախծու-

թեամբ սրտի կացին եւ համբերին տեսանն, մինչեւ զթացեալ երկինք՝ դարձուցանէ զգերութիւնս մեր որպէս զուղխս 'ի հարաւոյ եւ իբրեւ զուաղթ աւուրս գարնանոյ. որ յետ ցրտասառոյց ձմերան յաջորդէ։

ԴԱՒԻԹ

Եւ որպէս տէր արքայ։

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Բարեւոք զմտաւ ածեալ եմ տալ զգաւառս ամենայն 'ի ձեռս Վասլի կայսերի յունաց եւ առնուլ 'ի նմանէ փոխանակ տրին զԱնբասատիայ իւրոյնոյքն աշխարհօք, անդ ծուարեցայց փոքր ինչ եւ միամտօրէն. զի ըստ բանին " Լաւ է պատուս մի հայց հեշտութեամբ քան զտուն լի ամենայն բարեօք հանդերձ թշնամութեամբ "։ Եւ զի պիտոյ է ինձ աշխարհս ամենայն շահել եւ զանձն տուժել եւ ոչ օր մի անդամ ազատամիտ հանգչել։

ԱՏՈՒՍ

Դառն են այդ յիշատակութիւնք, Տէր արքայ, եւ ոչ կարէ տանիլ, որպէս լինի մեզ թողուլ զհայրենի տուն եւ զժառանգութիւն եւ երթալ բնակիլ ի տարաշխարհիկ յերկիր օտար եւ անտիրապետանոց. որպէս մուտայոյց զգերեցկութիւն վայրոցս եւ եղեմաշունչ սղոխքդ առուշանք։

ԱՊՈՒՍԱՀԼ

Ո՞հ լաւ է ինձ մեռանիլ քան թէ ծածկեցի յոչացս ծիր կապուտակ ծովուդ. այդ տեսիլ անմահութեան ծնանի յիս խանդաղատանս. մանաւանդ երբ այդ-ոն զարթնուցեալ զդէմս 'ի հիւսիս եւ զաչկունս 'ի մանրաձաձան յալիս դորին դարձուցեալ ծծեմ զկենդանարարն նորին առ բերեալ զանուշակ օդ, ոչ մոխանակ նորին Սեբաստիոյ 'ի սեւակատոր լերինս նկատեալ

յառեցից , յորմէ փոխանակ զուարթութեան 'ի մաղձոտութիւն դատապարտէ երկրրածին յախտ ամենաչար ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ի բաց թօթափեցից զլեռնամէջդ Արատայ, որ յաւուրս Մայիս եւ Ապրիլ ամսոց դրախտին բերեն զտիպար բիւրատեսակ երփնագոյն ծաղկամբք իւրովք եւ սառնալիժակ բղխեալ վտակօք, այն որ զմատաղ հասակն իմ սնուցեալ աճեցուցանէ, փոխանակ նորին 'ի Սեբաստիայ գնացից, ո՛հ նիրհական յիշմանս ։

ՎԵՍՏ

Պարտիզակդ որ արտաքոյ պալատան՝ իմ են ձեռաց աշխատութեան եւ տեղի հսկողութեանց, մատուռնք իմ 'ի հոգս նորին մաշեալ են 'ի դարմանել ։ անտես արարեալ զայն յաւուրս երկար յօտար եւ 'ի խորթ հող

մաշեցայց։ Ահդ մի տեսցեն աչք իմ 'ի կենդանութեան։

ԴԵՐԵՆԻԿ

Ո՛ւր մնան բազմաքիրտն վաստակք հարցն մերոց առաջնոց, զոր 'ի սէր հայրենեաց եւ դին զինչս իւրեանց եւ զկեանս. լաւ համարեցան մահուամբ եւ դառն ներղութեամբ զաչս կափուցանել 'ի հայրենի ծոց, քան հեռանալ գնալ եւ 'ի խորթ հողս ըզմնացուածս կենաց իւրեանց հանգատութեամբ անցուցանել. որ դառն թուի ճըշմարիտ հայրենասիրի այն գաղթականութիւն չար քան զկոճեղս բանտից եւ քան զանձուկ վայրս կալանաւորութեան։

ԳԱԳԻԿ

Ուռաւել քան զամենայն՝ նախատինս անարգանաց ունիմք մեք զկնի մեր, զինչ է այս, 'ի մեր աւուրս վախճան առնելոց էր

Վասպուրականն թագաւորութեան, մեզ մեծայր ճաշակել պտուղս այս դառնութեան որ 'ի վերս է քան զբնաւ դառին, աւուրք մեր 'ի գաղթականութեան անդ ոչ այլ ինչ լինելոց են. քայց եթէ 'ի սուգ անմխիթար համակիլ եւ առ սակաւ սակաւ ընդ Հայրենի տան եւ զազատութիւնս գերի վաճառելոց եմք։

ԱՀՈՏ

Բանիւ լոկով ոչինչ վճարի, գիտեմ զի այդ ամենայն փոփոխութիւնք եղուցեալ են եւ զօրաւոր, քայց կարի արիապէս ընդդէմ բանակն մեր ժուժել եւ կալ դիմագրաւ քարբարոսացս, մինչ չունիմք մեք յօգնութիւն ուստեքէ, եւ դիմակացն մեր խրոխտ է եւ արեանարբու, խոհեմութեան է ժամանակս եւ ոչ անձնապատան խրոխտանաց։

ԸՆՏԱՆԻՔ

Խիստ է բանդ գաղթականութեան եւ անուանելի. բայց կամք վերհատուռ Արքայի որպէս ասխարժեն այնպէս եղիցի. զի նորին կան մնան մատծել վասն երջանկութեան հպատակաց իւրոց, եթէ խոհեմութիւն է չուերն քան զմնալն՝ ապա ընտրելի է այն. զի մի բոլանդակն 'ի միասին մատնեսցուք բարբարոսին Նկիբեցոյ.

ԴԱՒԹ

Ինձ յոյժ քաղցր է. որպէս երկինք 'ի վերուստ վկայեն, մեռանիլ քաջութեամբ վասն հայրենեաց, եւ թաղիլ 'ի հող, յորմէ կուզմեցուս խոնարհութիւնք, բայց երբ տեսանեմ թէ բազումք 'ի պատճառս մերս զրաւ 'ի կենաց գնան. եւ թաւխուր յամենայն գոյից յեռին 'ի չքաւորութեան կամ 'ի ցաւս անհանդուրժելիս տապալեալ լինին

որոյ փորձն իսկ առի յանցելում պատե-
րազմի, ոչ մնայ յիս սիրտ եւ յուշ խոհա-
կանութեան, գազանային իմն ուղիղ պարտի
սիրտ անկարեկիր, զի նոցայն ոչ աղէխաշիցէ
ցաւոց եւ տառապանաց։ Որք վասն մեր
երկայնամտեալ կրեն եւ 'ի պատճառս մեր
կան յայնպիսի նեղութիւնս, ոչ ապաքէն
յաւուրն ահեղի վասն նոցին պատասխանիս
ուղիմք տալ։

Ս Ե Ն Ե Փ Է Ր Ի Մ

Ընվրէպ խորհրդածութեամբ, զոր խոր-
հեալ եմ, 'ի փրկութիւն անձինս եւ ընտա-
նեացս առնել՝ արարիչ։ Տեղի տուեալ փա-
խայց յերբեսայց բարկութեան, եւ մի անմը-
տօրէն մտայց 'ի ծառայութիւն եւ 'ի գե-
լութիւն ամբարշտին։ Բայց վասն այսր
իրի, որդեակ իմ Դաւիթ, եկ զքեզ առաքե-
ցեց դեսպանութեամբ 'ի Կոստանդնուպօլիս
առ Վասիլ կայսր, ընդ որ դաշնաւորեալ տա-
ցես զ Վասպուրական աշխարհս գաւառաք

իբրոլք, որոյ փոխարէն գիտեմ հաճի տալ զԱնբաստոյ եւ զիւրն շրջագայիւք գաւառս, որ չէ այնչափ հեռի 'ի Հայրենեացս, անդ կեցցից եւ զառօրեայ զկեանս յաւուրս ածեալ 'ի ճանապարհս հայցն մերոց ճեպեալ ընթացուք, որ է իսկ ամենեցուանցս իմանալի հայրենիք եւ տուն մշտնջենաւոր։

ՏԵՍԻԼ Գ.

ՍԵՆԵՔԷՐԻՄ · ԽՈՒՀՈՒՏ ԹԱԳՈՒՀԻ · ՀՈՒՏԱՆԵԻ ՀՐԱՆՈՒՏ ԴՍՏԵՐՔ ՆՈՑԻՆ · ԵՒ ԴՍՏՐԻԿ ·

ԴՍՏՐԻԿ

Ա՞այրիկ, խորհրդարան ակուռք առեալ ծանր իմն եղանակաւ խորհեին եւ ամենայն ոք զիւրն կարծիս յատենին մերկանայր, եւ մերմիկ իմն եւ տղոտակելոյ 'ի դուրս նոցին մածուցեալ ընդ ծերպ մի ոչ յան ուրեքն մատուցանէր, եւ լուայ 'ի վերջոյ, զի ոչ

հայիւաս հայր իմ տէր արքայ որոշակի վը-
ճիռ եհատ, տալ զՎասպուրական աշխարհ
'ի Վասիլ կայսր յունաց եւ փոխարէն նորին
ընդունիլ զՍեբաստիա քաղաք եւ զնալ
ընտանեօք եւ բնակիլ 'ի նմին։ Այդ բանն
վճռեցաւ եւ ահա Դաւիթ մեծ եղբայրն
իմ 'ի վաղիւ ունի պատրաստութեամբ 'ի
Ցունաստան առ Վասիլ կայսր գնալ դեսպանախօսութիւն զի վաւերացեալ հաստատեսցի գործն փոխադրութեան։

ԽՈՒՀՈՒՀ

(1) Ընչ կակազես տխմար աղջիկ դու, զինչ մարթի այդմ այդպէս լինել, զի բիւրապատիկ խոչընդոտն գոն այդմիկ, լռեաց, մի խօսիր զայդպիսի ճախող բանս։ . . .

ՀՐԱՆՈՒՀ

Ոչ յոյժ օտար երեւին խօսք քեռն իմոյ, մայրիկ, զի այս քանի աւուր է, յորս տեսանեմ տխրութիւն ծանր եւ թախիծ ան-

Թարգմանելի յերկուս եւ 'ի շարժմունս հոլն իմոյ վերհատուսի. մի գուցէ ձախող ելք պատերազմին սրտաբեկ արարեալ են զնա վասն այն խորհի առնել զայնպիսի ինչ, աւաղ. . . .

ՀՈՒՀԱՆ

Օ ինչ խօսիք, ցնորք կալեալ են զձեզ. զի տարօրինակ անուղղայս երազէք, մի արասցէ տէր. աւաղ յիշմանս. ոչ ապաքէն նոյն յեռայն խրբեւ 'ի կայծակէ հարեալ զրուսիմ 'ի կենաց. մի լուսասցի օրն այն եւ մի ծագեսցէ արեգակն այն աւուր զլոյս նշուլից իւրոց 'ի վերայ իմ. Լուսասցին ականոզիքս եւ մի հանդիսատես մնասցեն զուոյն այնմիկ գաղթական տարանջատութեան. մի կրկներ քոյր իմ մի կրկներ զայդ բան. ապաթէ ոչ . . .

ՍԵՆԵՔԷՐԻՄ ԻՎԵՐԱՑ ԵԿԵԱԼ

1) Ի՞նչ այդ տրամութիւն, տխրութիւն ընդէ՞ր պատեալ ունի զձեզ. զի՞ աղմկեալ էք, բան զպլթականութեան ընդէ՞ր այդպէս դժոխալուր թուի ձեզ, ո՛ր է լաւ, զերմի գնալ անհաւատին թէ սակաւիկ մի տեղի տալ բարկութեան. ոչ տպաքէն Աստուածաշունչ պատգամք զնոյն քարոզեն. Սիրասուսայ ոչ է տար եւ կալի հեռի՝ ի հայրենեացս յորմէ բաժանեալ գնամք. խակ Սկիւթեայ... ո՞հ անլոյս գիշեր, անտանելի գերութիւն, ո՛ր սիրտ ո՛ր երեւակայութիւն կարէ ժուժ ունել եւ անմոռաց մատնել ի՛ձեռս մարդախոշոշ գազանին. մի՛ սիրելիք իմ, մի այպէս անմտանայք, հաւատք ընդ հայրենեաց տալ վասն մեծ անհաւատութիւն է եւ յաւիտենական յաւանութիւն. Բայց Վարդապետանին զհոգեւորական կենդանութեան հոգւոյ ըզհոգ. մի՝ այն զժուարին ձեզ երեւեցի զի

ես եմ, որ վասն նոցա հանդերձ ունիմ տալ առ արդար դատաւորն Աստուած՝ առաջի որոյ նա միայն կարէ պարգևիցես հանդերձանալ. որ 'ի սէր կրօնի պայծառութեան զիւրն սերմանեալ երկնաւոր վարդապետութեան զսերմն ելցէ հոգւով շատ վաստակեալ. եւ զգ.առնա իւր 'ի քերանոյ շար գազանաց թափեալ։

ԽՈՒՀՈՒՀ

Օ՜ ի՞նչ լենիցին ապա եկեղեցիքս եւ ներուիրեալն վանորայք եւ մեհեանք եւ մատուռք. Հռոմի եկեալ տիրեցէ նոցին, յիշատակարանք նախնեաց ծորեցին ամպովն Յունական դատեալ թեանն. բազմամեայ քրանալատակ աշխատութիւն մեր 'ի սէր նոցին. ո՜հ, մոռացութեանն անհետացին։ Երկնանման տաճարդ, որ յանդիման կղերն Յոյն մաս եւ ել առնիցէ. փոխանակ քաղցրաձայն Հայ երգոց՝ օտարախառն ձայն ուրեմն։ Կարեւոր ապա ուրեմն Հայաստան. 'ի դերեւ ել աշխատութիւն Գարեգ-

ականին Գրիգորի. Յոչ պէտս աշխատ ե-
ղեւ մեծն Մեսրովբ 'ի գտանել զգիր հայ-
ացի. 'ի նանիր վաստակեցինհալոքն առաջինք
կանոնել զընթերցմունս եւ կարգադրու-
թիւնս եկեղեցական. Խորենացին լռեցէ
'ի գովելոյ զազգս եւ զեկեղեցիս Լուսաւոր-
չական. Մաշթոցն ծաղեալ զիւր թերթս ան-
պիտան նստեալ սգացէ, եւ հայկական
վեմ պայծառազարդ եկեղեցական բարե-
կարգ վայելչութիւնք ծածկելոց են 'ի քէն.
աւա՜ղ քեզ, Հայոց աշխարհ.

ՍԵՆԵՔԷՐԻՄ

Ո՛չ այդպէս, այլ իմ 'ի մոր եղեալէ վան
եկեղեցեաց, վանօրէից եւ նուիրական տե-
ղեաց ազատ թողուլ 'ի Յունական իշխա-
նութենէն, կրօնաւորք եւ հոգեսէր բարե-
պաշտք, որք կամին 'ի նոսին կալ՝ մնասցեն
եւ զպաշտամունս իւրեանց շարունակեսցեն.
Սրին վան ատեան խորհրդական ունիմ

կազմել յեկեղեցական եւ 'ի յազատ որ-
եարդ վՃիռ հաստատուն հատանել, զի այս
ամենայն այսպէս կացեալ մնասցէ. եւ մի
իրաւունս ունիցին Յոյն կղերք գրաւել տի-
րապէս զեկեղեցի Լուսաւորչական. որ այն
ինձ նախատինք են ցյապայ դարս։

ՀԱՆԴԷՍ Բ.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է 'ի լեռնաՀէջն Վարագայ որ հպցրուլիւն աղոխայ հնչէն ե- ականակիպ աղբերաչայն աղաղակեալ ընդ հոր ե- ընդ լոեալ դդչայն ղաո 'ի վայր հոյս գնան 'ի հորայորն ՀԵՃ։

